

U n h t G k i p f

2 h 2 m G k i p u . . .

616.9

R-13

616.9  
P-13


28 JUL 2010

ԲՅՇԿԱԴԵՏ Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

# ԱՂԻՔՆԵՐԻ ՃԻՃՈՒՆԵՐ

*և ի*

## ՍՐԱՆՑԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ



*Նկարներով*



**Թ Ի Ֆ Լ Ի Ս**  
ԷԼԷՔՏՐՈՅԱՐԻ ՏՊՈՒ Ն. ԱՂԱՆԵԱՆ, ՊՈՒԼՈՑ. 7.  
**1908**

29 AUG 2011

610  
210-ԲԱ

*Հ. Մանգուսյան*

ԲԺՇԿԱԳԵՏ Ա. ԲԱԹԱՆԵԱՆ

616.9  
Բ-13 47

# ԱՂԻՔՆԵՐԻ ԾԻՃՈՒՆԵՐ

Ե Խ

## ՍՐԱՆՑԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՅԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

10433



Նկարներով

Թ Ի Յ Լ Ի Ս

ԷԼԷՄԵՆՏԱՐԻ ՏՊ. Ն. ԱՂԱՆԵԱՆ, ՊՈԼԻՑ. 7.

1908



7445

Աչքի առաջ ունենալով, որ արեան պակասու-  
թեան և գանազան նեարդային հիւանդութիւնների  
պատճառը շատ անգամ աղիքների ճիճուներն են՝ առա-  
ջարկում ենք հայ ընթերցողին, թէ այս ճիճուներով  
վարակուելու նկարագրութիւնը և թէ սրանցից զգու-  
շանալու կերպը:

Բժշկ. Ա. Բ.

1908 թ. մայիս:



## ԱՂԻՔՆԵՐԻ ՃԻՃՈՒՆԵՐ

Եւ

ՍՐԱՆՅԻՑ ԱՌԱՋԱՅԱԾ ՀԻՒԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Թէ մարդուս և թէ առհասարակ կենդանիների աղիքների մէջ, որպէս և միւս գործարաններում, տեսակ տեսակ որդունքներ են պատահում, որոնց սովորաբար փորոտիքի ճիճուներ են անուանում:

Մինչև անցեալ դարու կէսը ոմանք կարծում էին, թէ այս ճիճուները ինքնիրանց են գոյանում մարդու կամ կենդանու կազմուածքի մէջ՝ ներսի հիւթերի փտումից: Բայց այժմ արդէն յայտնի է, որ ոչ մի կենդանի արարած, ուր և ինչ տեսակ էլ լինի, ինքն իրան գոյանալ չէ կարող. ուրեմն և ներսի հիւթերի փտումից ճիճու գոյանալու մասին խօսք չէ կարող լինել:

Շատ տեսակ մակաբույծներ (պարազիտներ) կան, որոնք աճում—բազմանում են մարդուս և կենդանու մարմնի բոլոր գործարաններում՝ այն է—ուղեղում, արիւնի մէջ, թոքերում, սրտի մէջ, աչքերում, երիկամունքի մէջ (պօլօճիկ), կաշուի տակ և մանաւանդ աղիքներում:

Այս մակաբույծներից մարդուս աղիքների մէջ ամենից շատ և յաճախ երկու ձևի ճիճուներ են պատահում՝ 1, Տափակ ճիճուներ (երիզորդ—ленточные глисты) և 2, Կլոր—երկարաձև ճիճուներ (круглые глисты): Ահա սրանց մասին է յատկապէս մեր խօսքը:

Տափակ ճիճուն (նկար 1) շատ երկար երիզի ձև ունի:



Նկար 1. Լայն տափակ ճիճու՝ 20 անգամ փոքրացած:

առանձին, անկախ մանեակների, և որոնք սննդառութեան մէկ խողովակ և մի հատ էլ սեռական գործարան ունին: Հետեւաբար ընդունում են, որ կալած շարուած մանեակներից բաժանուած կամ կտրուած մա-

Սորա մի ծայրը նեղ է, իսկ միւսը համեմատաբար լայն: Եթէ ուշադրութեամբ դիտենք՝ կը տեսնենք, որ այս որդ— կենդանին բաղկացած է իրարու հետ կալած — շարուած մանեակներից կամ յօղերից: Ամեն մէկը այս մանեակներից ունի իւր սննդառութեան և բազմանալու առանձին-առանձին գործարաններ: Մի և նոյն ժամանակ պէտք է ասենք, որ այս մանեակները կամ յօղերը՝ առանց փաստելու ճիճուի ամբողջ մարմնին, բաժանուելով միմեանցից՝ կարող են ապրել և չսատակել. այնպէս որ ամեն մի մանեակ կարծես առանձին անկախ որդ— կենդանի լինի, իսկ ինքը ամբողջ ճիճուն նոյն որդուներէ մի ժողով: Բայց այս կարծիքը ընդունելի չէ, որովհետեւ կան և այնպիսի երիւզորդներ, որոնք բոլորովին չեն բաժանուած միմեանցից

սերը ոչ թէ առանձին, անկախ որդ— կենդանիներ են, այլ նոյն ճիճուի ամբողջ մարմնի հատուածներ:



Նկար 2. Մնդէն տափակ ճիճուի գլուխը 4 ծծաններով. 40 անգամ մեծաց:

զինուած շատ փոքրիկ կարթերով: Այս կարթերը կարծես մի կրկնակի թագի ձև ունին որդ— կենդանու գլխին, որի շուրջը տեսնում ենք մինչև չորս հատ ծծաններ (присоски՝ նկար 2): Միւս երիւզորդները կամ տափակ ճիճուները իրանց գլխներին կարթեր չեն ունենում, այլ միայն երկու հատ ծծաններ: Այս կարթերով ու ծծաններով ճիճուի գլուխը պինդ կաշուած է մարդու կամ կենդանու աղիքին ներսի կողմից:

Տափակ ճիճուները, որ նետարգային համակարգութիւն ունին՝ գուրկ ևն աղիքից. այնպէս որ իրանց սննդառութիւնը ամբողջ մարմնի մաշկն է կատարում՝ ներս ծծելով հարկաւոր սնունդը: Իսկ սրանց սեռական գործարանների մասին պէտք է ասենք, որ ճիճուի ամեն մի մանեակ թէ արական և թէ իգական գործարան ունի, որոնցով և կարող է ինքն իրան բեղմնաւորել: Սակայն սեռական գործարանները աւելի զարգացած են ճիճուի ծայրերի մանեակներում,

ուր գլխաւորապէս ամփոփւում են որդ-կենդանու ձուիկները իրանց հասունցած սաղմերով:

Տափակ ճիճուի բոլոր տեսակների ձուիկները այն աստիճան մանր են, որ աչքով տեսնելու համար խոշորացոյցով պէտք է երկու հարիւր անգամ մեծացնենք որ երևան (նկ. 3, 4): Այս ձուիկները, որ



Նկար 3. լայն տափակ ճիճուի ձուիկը՝ 200 անգամ մեծացրած:



Նկար 4. մենակեաց տափակ ճիճուի ձուիկը սաղմով՝ 200 անգամ մեծացրած:

պատած են մէկ կամ մի քանի նուրբ թաղանթներից կազմած կեղևով՝ կլոր կամ ձուածն են: Ահա հէնց սրանց մէջն է որդ-կենդանու սաղմը, որ զինուած է կարթերով և կամ առանց կարթերի է՝ նայելով թէ որ տեսակիցն է ճիճուն: Այս կազմուած-հասունցած

ձուիկը, որ մարդու աղիքի մէջ էր գտնուում՝ դուրս գալով արտաթորուած կղկղանքի հետ, ընկնում է գետնի վրայ, աղբի մէջ, ջրերում, խոտի վրայ և այլն, և սրանց հետ խառնուած—միացած՝ այնպիսի մի պատահմանն է հանդիպում, երբ մարդս և կամ կենդանին—խոզը, հորթը, ձուկը և այլն՝ իրանց կերակուրն ուտելու կամ ջուրը խմելու ժամանակ, այն ձուիկն էլ են կուլ տալիս: Չուիկը այս կերպ մտնելով մարդու կամ կենդանու ստամոքսը՝ լուծւում է այնպիսի թթու հիւթի ազդեցութեամբ և իւր միջի սաղմը ծիւլում—անցնում է աղիքները: Այս սաղմը յաճախ վեց հատ սուր կարթեր ունի, որոնցով ստամոքսի, աղիքների և միւս գործարանների արեան երակները կարողանում է թա-

փանցել, և այս երակների ամենանեղ անցքերում մնալով՝ սկսում է արդէն զարգանալ: Սաղմը այստեղ կորցնում է իւր կարթերը և միանալով արեան երակների հիււտուածքին՝ այսինքն ներսի մաղասամաշկին, իւր շուրջը մի տեսակ բոժոժի նման թաղանթ է գոյացնում, որ բշտիկի կամ փամփշտածնի է փոխւում (նկ. 5, cysticercum): Յետոյ այս փամփշտածն



Նկար 5. լայն տափակ ճիճուի փամփշտածնը՝ 40 անգամ մեծացրած:

թաղանթի ներսը և կամ դրսի կողմից բողբոջի նման մի ծիլ է ասես բուսնում, ուր նորից կարթեր ու ծծաններ են առաջանում՝ բոլորովին նման հասունցած ճիճուի գլխիկի շուրջը եղած կարթերին ու ծծաններին: Ծիճուի սաղմը, որ այս պէս կերպարանափոխուելով բոժոժածն բշտիկի է նմանւում, սսփորարար կոչւում է փամփշտածն որդ (пузырчатая глиста или цистицерк): Սա տեսանելի է հասարակ աչքով և քորոցի գլխի չափ է: (նկար 6):



Նկար 6. մենակեաց տափակ ճիճուի փամփշտածնը 4 ծրծաններով՝ 40 անգամ մեծացրած:

Տափակ ճիճուի սաղմը, ինչպէս փոքր ինչ վերև ասացինք, թափանցելով արեան երակները՝ շրջանառութեան հոսանքով տարւում — մտնում է մարդու և կենդանիների գանազան գործարանները՝ ինչպէս — սիրար, թոքերը, աչքը, ուղեղը և այլն. և այնտեղ միայն կերպարանափոխւում է արդէն փամփշտածն ճիճուի, որ և նոյն տեղում նոյն ձևով անփոփոխ

է մնում: Այսպէս այդ գործարաններում բուն զնելով փամփշտածն ճիճուն՝ առաջ է բերում նեարդային համակարգութեան այնպիսի գրգռումն, որպիսին յատուկ է իւրաքանչիւր գործարանին:—Օրինակ՝ եթէ գլխի ուղեղում գանուի փամփշտածն ճիճուն՝ կարող է խանգարել կանոնաւոր մտածողութիւնը. այնպէս որ մարդս անմիտ, անտեղի բաներ կը խօսի և կը գործէ: Իսկ եթէ ողնաշարի ուղեղն ընկնի՝ ստքերի ու ձեռքերի անկանոն շարժողութիւններ առաջ կը բերէ. սրտի մէջ գանուելով՝ բարախումն ու սրտի ցաւեր կարող է պատճառել, և աչքում՝ աչքի ցաւ, բորբոքումն, տեսողութեան խանգարումն և այլն:

Ինչպէս տեսանք այն մարդը կամ կենդանին, որ պատահմամբ կուլ է տուել տափակ ճիճուի ձուիկը՝ նորա գործարաններում այս ձուիկի սողմը սկսում է զարգանալ և փոխարկուիլ միմիայն վերոյիշեալ փամփշտածն ճիճուի: Իսկ սա մարդու և կենդանու նոյն գործարաններում նոյն փամփշտածն ճիճու մնալով՝ երբէք չէ փոխարկուում տափակ ժապաւէնածն ճիճուի: Բայց որպէս զի փամփշտածն ճիճուն զարգանայ և տափակ ժապաւէնածն ճիճուի փոխարկուի՝ պէտք է որ նրանով վարակուած գործարանները, ինչպէս օրինակ՝ ուղեղը, սիրտը, լեարդը, աչքը մկանները և այլն— մարդս կամ կենդանին ուսէ որպէս կերակուր: Ահա այդ ժամանակ միայն աղիքներում փամփշտածն ճիճուն կը սկսի զարգանալ և փոխարկուիլ իսկական տափակ ժապաւէնածն ճիճուի՝ իւր յօդերով և բեղմնաւորութեան գործարաններով: Փամփշտածն ճիճուները հազիւ մի խոշոր քորոցի գլխի շափ են, և միայն (էխինոսոկոկուս) (echinococcus) կոչուած տափակ ճիճուի

փամփշտածնը՝ մարդուս լեարդում գտնուած ժամանակ մեծանում է մինչև երեխայի գլխի շափ:

Տափակ ժապաւէնածն ճիճուների կամ երկորդների տեսակներից մարդս ունենում է ամենից յաճախ հետևեալները՝ 1, Լայն տափակ ճիճու (широкий лентецъ), 2, Զինուած մենակեաց ճիճու (солитеръ) 3, Անզէն տափակ ճիճու (невооруженный лентецъ) և 4, Ոզնեակ տափակ ճիճու էխինոկոկուս (эхинококкъ) —

### ԼԱՅՆ ՏԱՓԱԿ ԾԻՃՈՒ

(Широкий лентецъ)

Լայն տափակ ճիճուի երկարութիւնը 8-ից մինչև 14 արշին է և կարող է բազկացած լինել մօտ 4000 մանեակներից կամ յօդերից—(տես նկար 1): Սորա գլուխը, որ մի տափակ նշի ձևի է նմանում և քորոցի գլխի շափ է՝ երկու կողմից փոս — ծծան ունի: Գլխին հետևում է թելի պէս բարակ վզիկը՝ մօտ կէս վերջուկ երկարութեամբ, և ապա սկսւում է մանեակների կամ յօդերի շարուածք, որից ամեն մէկը վզիկի մօտ լայնութեամբ աւելի է քան երկարութեամբ, իսկ պոչի կողմը քառանկիւնածն: Այս պատճառով է ահա, որ սորան լայն տափակ ճիճու անունն են տալիս: Սորա ձուիկները, որ ձուածն են և հասարակ աչքին անտեսանելի՝ պէտք է



խոշորացոյցով 150 կամ 200 անգամ մեծացնենք ու տեսնենք, և որոնք խոշորացոյցի տակ մի տեսակ նուրբ կեղևով պատած կ'երևան մեզ (տես նկար 3)։ Մինչպես լայն տափակ ճիճուի յօդերը կղկղանքի արտաթորման հետ դուրս են թափուում մի քանիսը միասին միացած՝ փոքրիկ շղթայիկի նման, միևս տափակ ճիճուների յօդերը կամ մասնիկները հատ հատ են թափուում և կամ երկու երեք հատը միասին։

Լայն տափակ ճիճուներով վարակուումը տարածուած է ըստ մեծի մասին Ռուսաստանի ծովեզրեայ երկրներում՝ այն է Ֆինլանդիայի ծովածոցի և Բալտիկ ծովի կողմերը, յետոյ Զուիցէրիայում, հարաւային Ֆրանսիա և Կովկասում։

Լայն տափակ ճիճուի ձուիկները, որ պատահաբար գտնուում էին մարդու, շան և կամ կատուի աղիքներում և որ դուրս թափուելով կղկղանքի հետ մի կերպ ընկնում են ջրի մէջ՝ այստեղ շատ անգամ կուլ են աալիս ձկները։ Այս ձկների փորոտիքներում յիշեալ ճիճուի սաղմերը իրանց ձուիկների միջից դուրս գալով՝ թափանցում են նոյն ձկների մկանները և այնտեղ նորից թաղանթ գոյացնելով իրանց շուրջը, կերպարանափոխուում են արդէն փամփշտաձև ճիճուների (пузырчатые глисты) (տես նկար 5)։ Եւ այսպէս ահա, վարակուած ձկների միսը մարդու կամ կենդանու կերակուր գտնուալով՝ այս կերածի հետ եղած փամփշտաձև ճիճուն էլ ընկնում է նախ ստամոքսը, և այնտեղից մտնելով աղիքները՝ մի քանի շաբաթուայ մէջ զարգանում և փոխարկուում է իսկական հասուն լայն տափակ ճիճուի։ Ուրեմն՝ ձրկների միսն է, որից այս ճիճուով վարակուում են

մարդը կամ կենդանին։ Այդ ձկներից կարող ենք յիշել գայլածուկը (щука), օրագուկը (лососина), արքունի ձուկը (налимъ), կարմրախայտը՝ (форель), մանիշաձուկը (корюшка) և այլն։ Ուստի երբ կերակրի համար գործածելու լինինք այս ձկների միսը, անհրաժեշտ է որ շատ լաւ եփենք և կամ խորովենք, որպէսզի մսի մէջ եղած փամփշտաձև ճիճուները բոլորովին ոչնչանան։

### ՉԻՆՈՒԱԾ ՄԵՆԱԿԵԱՅ ՃԻՃՈՒ

(СОЛИТЕРЪ)

Լայն տափակ ճիճուից բուսականին զանազանուում է այս զինուած մենակեաց ճիճուն կամ սօլիտէրը, որի երկարութիւնը 4-ից մինչև 6 արշինի է հասնում։ Սորա գլխի ձևն ու մեծութիւնը, որ քորոցի գլխի շափ է՝ վրան մի տեսակ մթազոյն բծիկ ունի։ Գլխի այս վերին մասը, որ կոչուում է կնճիթ, զինուած է 26 մանր կարթերով (крючки), որոնց պատճառով էլ զինուած մենակեաց ճիճու են անուանում, և որոնցով՝ այսինքն այդ կարթերով, սօլիտէրը կաշուում է աղիքների ներսի մաղասամաշկին։ Բացի կաշուում է աղիքների ներսի մաղասամաշկին։ Բացի կարթերից՝ գլխի շուրջն ունենում է չորս հատ կո-

րաձև ծծաններ (նկար 7), վիզը՝ լայն տափակ ճիճուի պէս, բարակ, իսկ մանեակների կամ յօդերի թիւը մօտ 800 կամ 900-ի է հասնում և զլանաձև են՝ այսինքն երկարութեամբ գրեթէ երկու անգամ աւելի են, քան լայնութեամբ: \*)



Նկար 7. մենակեաց տափակ ճիճուի գլուխը 4 ծծաններով և կարթերով, 40 անգամ մեծացրած:

Մենակեաց ճիճուի կամ սօլիտէրի ձուիկներն էլ՝ լայն տափակ ճիճուի ձուիկների պէս, շատ մանր են, այնպէս որ տեսնելու համար պէտք է սրանց էլ խոշորացոյցով 150 անգամ մեծացնենք, որ երևան: Զանազանութիւնն այն է, որ լայն տափակ ճիճուի ձուիկներից սօլիտէրի ձուիկները համեմատաբար աւելի հաստ կեղծով են պատած և իրանց միջուկ ամեն մէկը վեց կարթ (КРЮЧКИ) ունի (նկար 8):



Նկար 8. մենակեաց տափակ ճիճուի ձուիկը սաղմով՝ 200 անգամ մեծացրած:

Երբ սօլիտէրի այս ձուիկը մարդու կամ կենդանու՝ օրինակ—խոզի, ոչխարի և այլն, ստամոքսն ընկնի՝ ստամոքսի միջի հիւթի ազդեցութիւնը կը պատռէ ձուիկը պատող կեղևը և միջի սաղմը դուրս գալով՝ կանցնի արեան երակները: Այնտեղ այդ սաղմը իւր վեց կարթերով կը կաշի—կը ծակէ երակի մազասամաշկը և արեան հետ միանալով՝ հոսանքով կը

\*) Մենակեաց ճիճուի յօդերի նկարը գետեղուած է առաջի երեսին:

սուններն են որոնց մարմնի գործարաններում պատահում է անզէն տափակ ճիճուի փամփշտաձևը: Ուրեմն կրկնում ենք, որ կերակրի համար գործածելիս այս անասունների միտը և թէ միւս մասերը պէտք է շատ լաւ եփենք կամ խորովենք, որ իրանց միջուկ եղած փամփշտաձև ճիճուները բոլորովին ոչնչացնենք (նկ. 12):



Նկար 12. Անզէն տափակ ճիճուի փամփշտաձև ճիճուներով վարակուած հորթի միտը [ընակաճ մեծութեամբ]

Այսպէս ուրեմն տափակ ժապաւէնաձև ճիճուներով վարակուելու գրեթէ միակ և ամենատարածուած պատճառը կենդանիների միսն է: Բայց չը պէտք է կարծենք, թէ ուրեմն կենդանիների միտը էլ չը պիտի գործածենք, որպէս զի ճիճուներով վարակուելուց ազատ մնանք:—Ոչ. այս բանից զգուշանալու մասին վերևում մասամբ խօսեցանք, և այստեղ աւելացնում ենք, որ միշտ անհրաժեշտ է ի նկատի ունենալ թէ անասուն պահելու խնամքը և թէ նորա մտից կերակուր պատրաստելու եղանակը: Օրինակ՝ այն անասունները, որ կղկղանքով ապականուած տեղերում են արածում և կամ այնպիսի ջրից են խմում, ուր աղբ են թափում՝ հեշտ են վարակուած ճիճուներով, որովհետև կերածի կամ խմածի հետ ճիճուի ձուիկներն էլ կուլ են տալիս: Խոզը մանաւանդ շատ հեշտ է վարակուած, որովհետև յայտնի է թէ այս կենդանին միշտ ապականուած տեղերն է փնտռում և ամեն պատահած աղտոտութիւնը լափում: Խոզերի վարակման պատճառ են դառնում նոյնպէս գոմերում կամ



խոզանոցներում եղած մկները, որոնց որսում, ուտում են նրանք ագահութեամբ:

Ուրեմն թէ գոմերը և թէ խոզանոցները մաքուր պէտք է պահել և մի և նոյն ժամանակ անհրաժեշտ է հոգալ, որ մանաւանդ մորթելու կենդանիների կերուխումի պաշարը նոյնպէս մաքուր լինի: Այսպիսով բաւականին առաջն առած կը լինինք ճիճուներով վարակուելուն:

Ձը մոռանանք յիշել այստեղ նոյնպէս, որ ձրկներն էլ շատ են ախորժում աղբ թափած ջրերի կողմը հաւաքուել, ուր առատ կերակուր են գտնում կղկղանքներից ու աղտոտութիւններից, որոնց մէջ յաճախ կարող են պատահել լայն տափակ ժապաւէնաձև ճիճուների կամ երիզորգների թէ ձուիկները և թէ հատուած-յօդերը, հետևաբար և վարակել նրանց:

Բայց վարակուած կենդանիների միւր առհասարակ այնքան էլ վտանգաւոր չէ մարդու համար, եթէ միայն շատ լաւ եփած կամ խորոված լինի, այսինքն՝ այսպէս ասած—ախտահանուած լինի սաղմաւոր փամփշտած ճիճուներից: Աղ զրած մսերը, ապխտածը և կամ ուրիշ կերպով պատրաստուածները շատ լաւ եփածի ու խորովածի պէս անվնաս չեն, որովհետև միջի մասերը զրեթէ հում կամ անփոփոխ են մնում, ուստի և վարակումից մեզ բոլորովին չեն ազատում: Իսկ հում միսը և մանաւանդ խոզի հում միսը հօ բոլորովին վտանգաւոր են:

Պարզ հասկանալի է ուրեմն, որ ոչ թէ միայն պէտք է զգուշութեամբ խնամել և կերակրել մորթելու անասունները, այլ և ծախու հանած մսից հարկաւոր է զգուշանալ: Այս պատճառով մեծ նշա-

նակութիւն ունին ժողովրդի առողջութեան համար քաղաքային, հասարակական և ուրիշ վարչութիւնների արած կարգադրութիւնները: Այս կարգադրութիւններով կանոնաւորապէս հսկում են նրանք թէ սպանդանոցների և թէ մսավաճառների, երշիկի ու ձկան խանութների մէջ և կամ մի ուրիշ տեղ ծախուող մսերի վրայ, և խոշորացոյցով քննել տալուց յետոյ՝ թոյլ են տալիս վաճառել: Մինչդեռ Եւրոպայի և Ռուսաստանի մի քանի մեծ քաղաքներում այսպիսի հսկողութիւնը բաւականին գոհացուցիչ կերպով են կատարում՝ Թիֆլիսի և Կովկասի միւս քաղաքների մասին չենք կարող ասել միեւնոյնը: Աւելորդ է ասել, որ հասարակ աչքով և կամ սովորական մեծացնող ապակիով տեսած միսը, որ կասկածելի գոյն և զանազան բշիկներ ունի՝ չը պէտք է գործածել (տես նկար 9 և 12): Իսկ եթէ անպատճառ կամեւում են գործածել՝ հարկաւոր է շատ լաւ եփել և կամ խորովել:

Կրկնում ենք, որ առհասարակ պէտք է՝ որքան կարելի է, զգոյշ կենանք ճիճուներով վարակուելուց, որովհետև յայտնի է թէ այս մակաբոյծները (պարազիտները՝) զրգուելով գլխաւորապէս մարդու աղիքները, ոչ միայն մարտողութեան խանգարումն են առաջ բերում, այլ և վնասելով նեարդային համակարգութեան՝ թուլացնում են ընդհանրապէս ամբողջ կազմուածքը:

Թէև պատահում է երբեմն, որ ճիճուներով վարակուած մարդկանց առողջութիւնը մի առ ժամանակ անվնաս է մնում, բայց հետզհետէ՝ ժամանակ անցնելով, նրանք տեսակ-տեսակ անհաճոյ զգացում-

ներ են ունենում: Օրինակ՝ ստամոքսի մէջ զգում են ծանրութիւն, ճնշումն, մանաւանդ պորտի շուրջը, որ հետեանք է իսկապէս թէ ստամոքսի և թէ աղիքների մէջ կերածի լցուած լինելուն: Յետոյ փորի մէջ կարծես մի տեսակ զուճակ է գլորում և կամ ինչ որ կենդանի բան շարժում, որով և երբեմն ցաւեր, ծակոցներ են զգում վարակուածները:

Ճիճուով վարակուած հիւանդների գլխաւոր և յատուկ ախտանիշը գրեթէ միշտ փսխելը— սրտի խառնուելն է, որ մեծ մասամբ առաւօտները՝ դեռ ոչինչ չը կերած, այսինքն անօթի ժամանակն է պատահում: Ախորժակը սկսում է սաստիկ փոփոխուիլ: Առհասարակ կծու-թթու և խիստ համեմած կերակուրներ է ուզում հիւանդը: Իսկ ոմանք էլ գերադասում են կաթը և կաթնեղէն ուտելիքներ: Երբեմն հիւանդի ախորժակը այնպէս է բացում, որ ոչ մի բանով չը կշտանալով՝ ասես գայլի պէս որկրամոլ է դառնում: Իսկ մի ուրիշը ընդհակառակը՝ այնպէս է կորցնում ախորժակը, որ բոլորովին չէ ուզում բան ուտել՝ միևնոյն ժամանակ մի տեսակ դառնութիւն զգալով իւր բերանի մէջ:

Ճիճուն նոյնպէս յաճախ խանգարում է աղիքների կանոնաւոր գործողութիւնը. այնպէս որ հիւանդը կամ փորլուծումն է ունենում և կամ ամբողջութիւն— փորկապութիւն: Իսկ երբեմն էլ այս անկանոն արտաթորութեան երկուսն էլ՝ այսինքն թէ փորլուծումն և թէ յետոյ փորկապութիւն և կամ ընդհակառակը: Ճիճուններով վարակումից առաջացած հիւանդոտ երևոյթները կամ ախտանիշները, որոնց մասին խօսեցանք, շատ նման են ստամոքսի և աղիք-

ների տեսական խանգարման— դումին (каатаръ): Հետեաբար և բնական է կարծել, թէ ճիճուներն են պատճառ այդ հիւանդութեան: Այս ենթադրական կարծիքը աւելի հաւանական է դառնում, երբ տեսնում ենք, որ հիւանդը բժշկուելով ճիճուի ցաւից՝ վերև յիշած ախտանիշները այլ ևս չէ ունենում եթէ միայն նորա կազմուածքը ի հարկէ հիւանդ չէ ընդհանուր խանգարումներով, որոնք շատ տեսակ են և կարող են առաջ գալ ինչպէս նեարդային համակարգութեան անկանոն գրութիւնից, նոյնպէս և արեան զգալի կերպով փոփոխուելուց:

Շարունակելով մեր խօսքը ճիճուով վարակուածի ախտանիշների մասին՝ պէտք է աւելացնենք, որ հիւանդը երբեմն իւր ամբողջ մարմնով և կամ մարմնի մի տեղում կարող է զգալ սաստիկ քոր կամ մարմաջ: Այս քորը երբեմն այնպէս է սաստկանում, որ մեծ անհանգստութիւն պատճառելով՝ ուժասպառ է անում հիւանդին: Իսկ յաճախ էլ պատահում է, որ մարմաջի շատ թոյլ տեսակիցն ունի հիւանդը, որի բի ծայրն է միայն քոր գալիս, և որ ժողովուրդը սովորաբար ճիճու ունենալու նշան է կարծում: Չը մոռանանք յիշել ախտանիշներից նոյնպէս և յաճախակի գլխացաւն ու գլխի պտոյտը: Պատահում են այնպիսի դէպքեր էլ, երբ ճիճուով հիւանդը նեարդային ծանր ցաւեր է ունենում՝ օրինակ— ջղաձգութիւն, անդամալուծութիւն, ընկնաւորութիւն, սքլիտի պար կոշուած հիւանդութիւն, մենամոլութիւն և մինչև իսկ խելագարութիւն: Զգայարանները շատ անգամ խանգարում են:— Տեսողութեան կամ աչքի ամեն տեսակ տկարութիւններ առաջ գալով՝ ժամա-

նակաւոր կուրութիւն, աչքերի պէծպծումն ու շողշողումն և շլութիւն է ունենում հիւանդը: Թանգարւում է նոյնպէս լսողութեան գործարանը և հիւանդի ականջին լսելի են լինում խշխշոց, զանազան խուլ աղմուկներ և կարծես զանգակի նուրբ ձայներ և այլն: Իսկ երեխայ հիւանդները երբեք կակազում են, և առհասարակ սրանք աւելի են ենթարկւում նեարգային խանգարումներին, քան թէ հասակաւորները:

Բայց ճիճուով վարակուելուց առաջացած հիւանդութիւններից ամենայաճախակին արեան պակասութիւնն է, որ կարող է խիստ սաստկանալ և չափազանց վտանգաւոր լինել:—Տիւանդն այս դէպքում հետզհետէ նիհարելով՝ այնչափ է նուազում, որ բոլորովին կորցնում է երեսի գոյնը. շրթունքների ու կուպերի ներսի կողմը սաստիկ գունատւում են և կարծես իրանց երակների մէջ արեան նշան էլ չեն ունենում: Միևնոյն ժամանակ հիւանդը տեղից շարժուելիս՝ սկսում է հեւլ և սրտի բարախումն, շնչարգելութիւն, ուշաթափութիւն և մանաւանդ մրսկանութիւն է զգում, որ յետոյ փոխւում է տաքութեան: Մի խօսքով արեան պակասութեան թէ այս և թէ վերևում յիշուած ախտանիշները, որ կարող է մահուան գունդ հասցնել հիւանդին՝ պէտք է ի հարկէ լաւ քննուին, իմացուին, և եթէ պատճառը ճիճուն է՝ աւելորդ է ասել որ հարկաւոր է անմիջապէս բժշկուել այդ ցաւից: Իսկ թէ ինչպէս և ինչ նշաններով պէտք է իմանանք թէ մարդս հիւանդ է ճիճուով՝ այս մասին արդէն խօսեցինք վերևում և դարձեալ կրկնում ենք, որ արտաթորութեան ժամանակ կղկղանքի հետ դուրս թափուած ճիճուի յօդերը

այդ հիւանդութեան անկասկածելի ապացոյց են: Կարելի է խոշորացոյցով նոյնպէս քննել—տեսնել հիւանդի կղկղանքը, թէ արդեօք ճիճուի ձուլիկներ հօ չունի իւր միջում: Աւելացնենք այստեղ, որ սոխ, սխտոր, ելակ, մորի, դդումի սերմ և տառեխ ձուկն ուտելով կարող ենք ճիճուի յօդերի դուրս թափելը արագացնել, թէև այս միջոցը շատ էլ վրասահելի չէ:

Վերջապէս, եթէ որևէ կերպով հնար եղաւ և իմացանք, որ մարդու աղիքներում ճիճու կայ՝ աւելորդ է ասել որ անհրաժեշտ է դուրս անել նրան այնտեղից, թէկուզ մեր նկարագրած հիւանդութիւններից դեռ ևս ոչ մէկի պատճառ էլ չը լինի դարձած: Իսկ ճիճուի դուրս անելը դժուար բան չէ, միայն թէ այս գործողութիւնից մարդու կազմուածքը փոքր ինչ թուլանում է և աղիքները զրգուում:

Այս պատճառով ծեր և ուժասպառ մարդկանց, բնքոյշ և թոյլ կազմուածքի տէր երեխաների նկատմամբ, որպէս և յղութեան ու դաշանի ժամանակ և նոյնպէս ստամոքսի ու աղիքների և ուրիշ սուր հիւանդութիւնների դէպքերում պէտք է զգոյշ լինել և դուրս չանել ճիճուն, եթէ միայն ի հարկէ սրանից չեն առաջացած այդ հիւանդութիւնները:

Ճիճուն աղիքներից դուրս անելու համար հիւանդը այնպիսի դեղ պիտի խմէ, որ բոլորովին թուլացնէ, թմրեցնէ ճիճուին: Խմած դեղը ստամոքսից աղիքներն անցնելով՝ ողողում է ճիճուին: Բայց որպէս զի դեղը ողողէ և իւր ներգործութիւնն անելով՝ թմրեցնէ ճիճուին, պէտք է որ աղիքները լցուած չը լինին կերածի զանգուածով, որով կարող է փաթա-

Թուած լինել ճիճուն, և խմած դեղը հարկաւոր աղ-  
 դեցուլթիւնը չի ունենալ: Ուրեմն որպէս զի դեղն իւր  
 ներգործութիւնն ունենայ և թմրած ճիճուն իսկոյն  
 դուրս հանէ՝ անհրաժեշտ է հետևեալը գիտենալ:—  
 Նախ՝ մի օր առաջ հիւանդը պիտի խմէ մի թեթև  
 լուծողական, օրինակ անգլիական աղ սեղանի մի  
 գդալով՝ մի բաժակ ջրի մէջ, եթէ հասակաւոր է  
 հիւանդը—և կարելի եղածին չափ քիչ ուտէ, այն էլ  
 դիւրամարս բաներ՝ ինչպէս կաթ, ձու, միս և մի քիչ  
 էլ սպիտակ հաց: Իսկ այնուհետև կարելի է արդէն  
 ընդունել ճիճու թմրեցնող դեղը: Թէև շատ տեսակ  
 դեղեր կան ճիճու թմրեցնելու համար, բայց ամենից  
 լաւը և իսկապէս ներգործողը նուան ծառի կեղևն է,  
 որ հետևեալ կերպով պէտք է պատրաստել:—Վերց-  
 րէք 2 ունց կամ 14 մսխալ նուան ծառի կեղև բա-  
 ւականին մանրացրած և ածէք չայի մի բաժակ ջրի  
 մէջ և 12 ժամ թողէք որ լաւ թրջուի: Յետոյ բա-  
 ժակի մէջ եղածը այնքան եփ տուէք, որ վեցերորդ  
 մասը գոլորշիանայ. և ապա այդպէս եփ տուած հե-  
 ղուկը քամելուց ու սառեցնելուց յետոյ՝ կարող էք  
 աւելացնել փոքր ինչ որև է շարապ (սիրօպ), մանա-  
 ւանդ հնդկապղպեղի կամ զէնջէֆիլի (инбирный) շա-  
 րապից: Այսպէս պատրաստած դեղը երկու մասը  
 կանէք և կը տաք անօթի հիւանդին որ մէկ մասը  
 խմէ, իսկ միւս մասն էլ կէս ժամից յետոյ: Բացի  
 նուան ծառի կեղևից շատ լաւ են ներգործում նոյն-  
 պէս արու փիլիկի կամ պտերարուտ ասուած խոտի  
 մուգը (экстракт мужского папортника), որ դեղա-  
 տանն են պատրաստում, և որ պէտք է գործածել  
 միայն բժշկի խորհրդով: Յետոյ Հարէշտամունւմ բուս-

նող կուսսօ կոչուած բարձր թփի չորացած ծաղիկ-  
 ները ևս, որ ճիճուն թմրեցնելու համար սովորական  
 տարածուած դեղ է համարում՝ շաքարաջրով, կիւ-  
 րոնաջրով՝ այսինքն լիմոնաղով և կամ կարմիր գինու  
 հետ խառնած, — 7 մսխալ հասակաւոր հիւանդին, իսկ  
 երեխայի համար այս չափից շատ պակաս: Այս դեղն  
 էլ երեք մասը պէտք է անել և ամեն կէս ժամից  
 յետոյ մէկ մասը խմել:

Այս բոլոր դեղերը ընդունելու ժամանակ հար-  
 կաւոր է անօթի լինել: Բայց ով որ բուրբուրի անօ-  
 թի մնալ չէ կարող՝ թող մի բաժակ դատարկ չայ  
 կամ սուրճ խմէ և ապա դեղն ընդունէ: Եթէ սրտի  
 խառնուելու կամ փսխելու—զգացումն ունենայ՝ լաւ  
 է որ իսկոյն լիմոնի կտորներ ծծէ շաքարի հետ և  
 կամ սառուցի կտորներ: Դեղը խմելուց յետոյ աւելի  
 լաւ է անմիջապէս նստել կամ պոկիել՝ մի խօսքով  
 տեղից չշարժուիլ: Այս դեղերը, որ ճիճու թմրեցնող  
 դեղեր են միայն՝ բաւական չեն: Հարկաւոր է մի  
 զօրեղ և արագ ներգործող լուծողական ևս, որ թրմ-  
 րեցնող դեղի վերջին մասը ընդունելուց յետոյ՝ երեք  
 ժամ անցած պիտի խմէ հիւանդը: Լուծողականը, որ  
 իսկապէս ճիճուն դուրս անելու համար է՝ միևնոյն  
 ժամանակ մաքրում է աղիքները թմրեցնող դեղի  
 այնտեղ մնացած մասերից, որ կարող են վնասել  
 հիւանդին: Լուծողականներից կարող ենք յիշել  
 տղկահատի իւղը — զէնէգէրչաքի ձէթը, (касторовое  
 масло), որ պէտք է ընդունել սեղանի մի գդալով  
 երկու անգամ երկու ժամուայ մէջ, և կամ անգլիա-  
 կան աղը, նոյնպէս սեղանի մի գդալով՝ մի բաժակ  
 ջրի մէջ լուծուած:

Երբոր լուծողականը սկսում է ազդել՝ այսինքն աղիքների գործողութիւնը արագանալ և հիւանդն արդէն կարիք է զգում դուրս գնալու, պէտք է այնպէս յարմար նստի գիշերուայ ամանի վրայ, բայց ոչ արտաքնոցում, որ ամբողջովին դուրս ընկնի ճիճուն: Շատ անգամ դուրս է ընկնում յանկարծ մի կծիկի ձևով, շատ անգամ էլ կամաց-կամաց ժապաւէնի նման երկարանալով, որ կարող է տևել մի ժամ և կամ էլ աւելի: Այս դէպքում խիստ կարևոր է այնպէս անել, որ չը կտրտուի ճիճուն, այլ թող տալ որ հանգիստ դուրս գայ, ընկնի ամբողջապէս: Այս բանի համար շատ լաւ է և հարկաւոր է հիւանդի տակը դրած գիշերուայ ամանի մէջ տաք ջուր ածել: Ծիճուն դուրս գալիս կը զգայ իրան դիւրալի տաքութիւնը և իսկոյն ամբողջապէս կընկնի առանց կտրտուելու: Աւելորդ է ասել, որ հիւանդը համբերութիւն պիտի ունենայ և նստած սպասէ որ հիմնովին արտաքսուի ճիճուն աղիքներից: Իսկ երբոր ճիճուն դուրս եկաւ, պրծաւ բոլորովին և կասկածում են, թէ նորա յօդերից գուցէ կտորներ են մնացել աղիքների մէջ՝ օգտակար կը լինի հինգ բաժակ հասարակ գաղջ ջրով գրեխ (клизтиръ) դնել: Այսպիսով՝ եթէ ուղիղ աղիքի մաղասամաշկին կպած ճիճուի մնացած կտորներ դարձեալ կան, և մանաւանդ նորա գլուխը, դուրս կ'ընկնին նոյնպէս: Ծիճուից այսպէս ազատուելուց յետոյ հիւանդը եթէ թուլութիւն, գլխի պտոյտ և կամ ուշաթափութիւն զգայ՝ պէտք է կազդուրիչ բաներ ընդունէ՝ օրինակ՝ գինի, սուրճ և վալերեան կամ չօֆմանի կաթիլներ 20-ից մինչև 30 կաթիլ:

Որպէս զի լաւ լւմանանք և հաւաստի լինինք թէ ճիճուի գլուխն էլ դուրս է ընկել՝ հարկաւոր է կրկնականքի վրայ ջուր ածել և հետզհետէ այնքան լուանալ, կեղտոտ ջուրը զգուզութեամբ մի կողմ թափելով՝ մինչև որ ամանի մէջ միայն լուացուած ճիճուն մնայ: Սորա գլուխը, որ վերևում արդէն նկարագրեցինք՝ կարելի է տեսնել սովորական մեծացնող սպակիով և կամ խոշորացոյցով:

Երբէք չը պէտք է ճիճուն արտաքնոց, աղբանոց և կամ մի ուրիշ տեղ շարտել—զցել, որովհետև մեզ արդէն յայտնի է որ այդպիսով նորից առիթ կը տանք ճիճուին զարգանալու՝ ուրեմն և նորից բազմանալու և տարածուելու: Որովհետև ճիճուն աղիքներից դուրս ընկնելով դեռ ևս ոչ թէ սատակած, այլ թմրած դրութեան մէջ է, ուստի և իւր ձուկներին հետ բոլորովին սատկեցնելու համար՝ այսպէս պէտք է անել:—Ածէք վրան սաստիկ եփ տուած, եռ եկած ջուր, իսկ այն բոլոր կղկղանքը և լուանալու համար վրան թափած կեղտոտ ջուրը, որոնց մէջն էր ճիճուն՝ ախատահանեցէք չայրուած-կիզիչ կրով:


Թէև առհասարակ կարծում են որ՝ երբ ճիճուի գլուխը դուրս ընկաւ, հիւանդը բոլորովին ազատուել է ցաւից, բայց այս կարծիքը չէ կարող ընդհանուր կանոն լինել, մանաւանդ որ ճիճուի գլուխը փնտուել գտնելն էլ հեշտ բան չէ: Եւ յետոյ՝ հիւանդը գուցէ ոչ թէ մէկ ճիճու ունէր, այլ մի քանի՝ ուրեմն և մի քանի ճիճուի գլուխներ. և իրաւ, կան և եղել են դէպքեր՝ երբ մարդուս աղիքներում ոչ թէ մէկ, այլ բազմաթիւ ճիճուներ են գտնուել: Հետևաբար՝ հաւաստի լինելու համար, թէ ճիճուի ցաւից այդպէս

ազատուած անձը իրօք բժշկուած է թէ ոչ, հարկաւոր է նախ ստուգել թէ հիւանդը մէկ հատ ճիճու ունէր, և ապա թէ՛ բժշկուելուց յետոյ, երեք-չորս ամիս անցած, էլ չեն կրկնուում այն բոլոր ախտանիշները, որ առաջ ունենում էր ապաքինուած համարուող հիւանդը: Իսկ հաստատ համոզուելու համար՝ այդ ժամանակամիջոցն անցնելուց յետոյ, կարելի է փորձել նորից բժշկել առողջ համարուած հիւանդին: Միայն այս անգամ նորան պէտք է տալ հակաճիճուի դեղը՝ առաջին անգամ տուածից հինգ անգամ պակաս քանակութեամբ:

ՈՉՆԵԱԿ ՃԻՃՈՒ

(ЭХИНОКОКЪ)

Տափակ ճիճուների տեսակներից ամենափոքր և ամենավտանգաւոր որդը, որ յաճախ շան և գայլի աղիքներումն է գտնուում՝ ողնեակ կոչուած ճիճուն է: Սորա երկարութիւնը հազիւ վերջոկի քառորդի չափ է և ինքը բաղկացած է երեք կամ չորս խիստ փոքրիկ յօդերից (նկար 13): Գլխիկի վրայ երեւում են չորս



Նկար 13. ողնեակ ճիճու՝ 5 անգամ մեծացրած:

հատ հազիւ նշմարելի ծծաններ և կնճիթիկը իւր կարթիկներով: Սորա ձուիկները, որ նոյնպէս չափազանց մանր են և երկու հարիւր անգամ մեծացրած տեսանելի

(նկար 14)՝ ընկնելով պատահաբար մարդու ստամոքսը, լուծուում են այնտեղ: Այնուհետև այդ լուծուած ձուիկների միջեց դուրս եկած սաղմերը՝ մտնելով նոյնպէս արեան երակները, շրջանառութեան հոսանքով տարուում են մարդու մարմնի գործարանները—սիրտը, թոքերը, լեարդը և այլն, և այնտեղ կերպարանափոխուում են արդէն փամփրշտած և ողնեակ ճիճուների:



Նկար 14. ողնեակ ճիճուի ձուիկը՝ 200 անգամ մեծացրած:

Մինչև այժմ մեր յիշած տափակ ճիճուների փամփրշտածևի մասին խօսելով՝ ասացինք որ մարդու մարմնի զանազան գործարաններում այդ ճիճուների փամփրշտածևը գնդասեսի կամ քորոցի գլխի չափ կարող է լինել և այնպէս էլ մնալ այնտեղ: Բայց ողնեակ ճիճուի փամփրշտածևի մասին պէտք է ասենք, որ երեկամուսքի, լեարդի կամ թոքերի մէջ գտնուելով՝ կարող է շատ մեծանալ և մինչև իս'լ երեխայի գլխի չափ դառնալ:

Այսպէս պատահած հիւանդութիւններին, որ սաստիկ տանջող ցաւեր են պատճառում, ենթարկուած են գրեթէ բացառապէս շների հետ խիստ մօտ եղող, իրանց ամանից ու գդալով նրանց կերակրող և իրանց լիզել տուող անձինք:

Եւ շները, որ սովորութիւն ունին յաճախ լիզել իրանց յետոյքը՝ եթէ վարակուած են ողնեակ ճիճուներով, սրանց ձուիկները հեշտութեամբ կարող են ունենալ իրանց լեզուների վրայ, ուրեմն և այդպիսով վարակել շուն սիրող անձանց:



ԿԼՈՐ—ԵՐԿԱՐԱԶԵԻ ՃԻՃՈՒՆԵՐ

(Круглые глисты)

Բացի վերև նկարագրած տափակ ճիճուներից՝ մարդու և կենդանիների տղիքներում կարող են լինել կլոր—երկարաձև ճիճուներ ևս, որոնք գլանաձև են և իրանց կազմուածքի մի քանի յատկութեամբ ու մարմնի երկարութեամբ զանազանում են միմեանցից: Սրանց մարմնի մի ծայրը սուր է, իսկ միւսը բութ: Այս բութ ծայրի վրայ է բերանը, որից սկսում է ամբողջ ճիճուի երկարութեամբ սննդառութեան մի խողովակ, որ վերջանում է մի ծակով: Այս ճիճուների մարմինը պատած է մկանային մանրաթելեր ունեցող մի շատ առաձգական մաշկով: Արիւնը սպիտակ է, իսկ սեռական գործարանի նրկատմամբ պէտք է ասենք որ արու և էգ ունին՝ առանձին-առանձին: Սրանք բեղմնաւորում և բազմանում են մեծ մասամբ ձուիկներից: Ասում ենք մեծ մասամբ ձուիկներից, որովհետև սրանցից այն տեսակի էլ կան, որ կենդանի են ցնկնում:

Մարդուս աղիքներում հետևեալ կլոր-երկարաձև ճիճուները կարող են լինել՝ 1—Ասկար կամ սովորական վիշապակ (обыкновенный струнецъ или аскарида), 2—Մագորդ—ցատկիչ (дѣтская острица—пригунчикъ), 3—Կորբերան—որդ (анхилостомъ) և 4—Չարակ ճիճու (трихина):


ԱՍԿԱՐ ԿԱՄ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՎԻՇԱԿԱՊ

(Обыкновенный струнецъ или Аскарида)

Ասկար ճիճուն գոգոյն-կարմրաւուն գոյն ունի և արտաքին տեսքով շատ նման է անձրևորդ կոշուած ճիճուին (նկար 15): Երկարութեամբ սա 4-ից մինչև 7



Նկար 15. կլոր երկարաձև սովոր ճիճու 3 անգամ փոքրացրած



Նկար 16: սովոր ճիճուի ձուիկը 200 անգամ մեծացրած:

վերջով է: էգը աւելի խոշոր է, բան թէ արուն: Բեղնաւորում է ձուիկներից և շատ շուտով բազմանում: Սորա ձուիկներն էլ՝ տափակ ճիճուների ձուիկների պէս, չափազանց մանր են և տեսնելու համար նոյնպէս խոշորացոյցով 200 անգամ պէտք է մեծացնենք որ երևան (նկար 16): Չուիկի միջուկը, որ հատիկների է նման՝ շատ նուրբ կեղևով է պատած, իսկ կեղևն էլ մի թաղանթով:

Կլոր-երկարաձև ճիճուներով հետևեալ կերպով է վարակում մարդըս:—Այգիների, բանջարանոցների և կամ այսպիսի բացօդեայ տեղերում պատահմամբ կարող է լինել այս ճիճուների վարակուածների բոլորովին չորացած և արդէն փոշի դարձած կղկղանքը: Այս փոշիացած կղկղանքը քամու հոսանքով խառնուելով գետնի փոշու հետ՝ տարւում—նստում է թէ բանջարեղէնների ու կանաչեղէնների վրայ, թէ տարածւում—հասնում է ծառերի պտուղներին և թէ

ընկնում— թափւում է ջրերի մէջ: Քննելով խոշորացոյցով շատ անգամ այս խառնուած փոշին՝ տեսել են իրաւ և ապացուցել, որ յիշեալ ճիճուի թէև չորացած, բայց դեռ կենսունակ ձուիկներ է ունեցել իւր մէջ: Հետևաբար հաստատապէս պէտք է ասենք, որ խմած անմաքուր ջուրը, իստակ ջրով չլուացած և հում հում կերած բանջարեղէնը, կանաչեղէնը, գետնից հանած ու թողած և ապա չմաքրած արմտիքը, որպէս և անլուայ կամ անեփ կերած պտուղները, որոնց վրայ կարող էին լինել այս ճիճուների ձուիկները գլխաւոր միջնորդ-պատճառ են դառնում մարդուս վարակման: Ուրեմն՝ ինչպէս առհասարակ նմանապէս և այս դէպքում անհրաժեշտ է, որ գգոյշ և մաքուր լինին և միշտ՝ թէ խմելու և թէ յիշեալ բուսեղէնները նախապէս ողողելու, լուանալու համար բոլորովին մաքուր կամ եփած ու սառեցրած ջուր գործածեն:

Այս ճիճուների ձուիկները նոյնպէս կերածի և կամ խմածի հետ ստամոքսն ընկնելով՝ լուծւում են թթու հիւթի ազդեցութեամբ և իրանց միջում եղած սաղմերը ծլկւում—անցնում են աղիքները, ուր զարգանալով՝ հասունցած ասկար ճիճուի են փոխարկւում:

Ասացինք որ առհասարակ մաքրութիւնը և կրկնում ենք որ մանաւանդ ձեռքերի մաքրութիւնը շատ կարևոր է ի հարկէ: Եւ օրինակ՝ եթէ այս ճիճուով վարակուած անձը պատահամբ շոշափէ իւր յետոյքի անցքը և յետոյ կեղտոտ ու անլուայ ձեռքերով իւր ուտելիքը մօտեցնէ բերանին, հեշտութեամբ կարող է դարձնալ նորից վարակուել կամ. աւելի ճիշտն ասած, ինքնավարակել: Ահա այս է պատճառը թէ ինչու աս-

կարներով վարակուածներից մեծ մասը անմաքրասէր անձինք, երեխաներ, ծերունիներ և ապուշներ են:

Կլոր-երկարաձև ճիճուների թիւը մի մարդու և կամ մի կենդանու աղիքներում կարող է հարիւրներով լինել և երբեմն մինչև իսկ հազարի հասնել: Սրանցով հիւանդացածի ախտանիշները և պատճառած հիւանդութիւնները նոյնն են, ինչ որ ասացինք վերևում տափակ ճիճուներով վարակուածների մասին: Աւելացնենք միայն թէ կարող է պատահել երբեմն, որ այս ճիճուով հիւանդը ամբողջ մարմնի այնպիսի շղաճը-գութիւններ ևս ունենայ, որպիսին յատուկ են ընկաւորներին:

Ասկար ճիճուները թէ իրանց մարմնի կարծրութեան ու ձևի և թէ շարժունութեան պատճառով շատ աւելի վտանգաւոր են, քան թէ տափակ ճիճուները:—Այսպէս օրինակ՝ շատ անգամ աղիքներից վեր ծլկուելով ստամոքսը, ցաւեր և փսխումն են առաջացնում, և փսխածի հետ դուրս ընկնում հիւանդի բերանից: Իսկ երբեմն էլ մտնում են կոկորդը ու այստեղից շնչափողով անցնում թոքափողերը, որով և սաստիկ շնչարգելութիւն են պատճառում: Այսպիսի հիւանդոտ երեոյթներին առհասարակ ենթարկուած են երեխաներ, կազմուածքով թոյլ մարդիկ և արբեցողներ: Պատահել է նոյնպէս, որ ասկար ճիճուն աղիքներից մտել է լեղապարկը և չափազանց դեղնութիւն կամ դեղնախտ առաջացրել: Յետոյ մինչև անգամ միզափամփշտի և երիկամունքի մէջ եղել և խիստ զրգռումներով ու ցաւերով տանջել հիւանդին: Բայց բարեբախտաբար այս կերպ հիւանդանալու դէպքեր շատ հազիւ են պատահում և աս-

կար ճիճուն սովորաբար լինում և մնում է աղիքներում:

Մարդու աղիքներում տափակ ճիճուի հետ միս-  
ժամանակ կարող է լինել երբեմն և ասկար ճիճուն:  
Սրանով հիւանդանախն իմանալու համար՝ պէտք է  
լաւ նայել-տեսնել կղկղանքը, որի հետ միտոին  
դուրս է գալիս ամբողջ ճիճուն հատ-հատ:


Ասկար ճիճուն աղիքներից դուրս անելու համար  
ամենալաւ դեղը սանտոնին կոչուած փոշին է՝ լու-  
ծուած շաքարաջրում, որ պէտք է ընդունել օրը  
երեք անգամ կէս կէս գրան և կամ այս դեղից պատ-  
րաստած դեղահատիկներ մի-մի հատ՝ նոյնպէս երեք  
անգամ օրը: Սանտոնինը թմրեցնում է ճիճուին և  
այնուհետև բաւական է մի բաժակ դառը—ջուր աս-  
ուած լուծողականն ընդունել, որ դուրս ընկնի ճիճուն:  
Սանտոնինը և լուծողականը կարելի է ձեռք բերել  
դեղատանը՝ յայտնելով թէ հասակաւորի և կամ երե-  
խայի համար է դեղը, որովհետև իւրաքանչիւր հա-  
սակին յարմար չափով պէտք է տալ:

Հաւաստիանալու համար թէ ճիճուն դուրս գցե-  
լուց յետոյ հիւանդ եղածը բոլորովին ապաքինուած  
է թէ ոչ՝ լաւ կը լինէր երկու ամիս անցած նորից  
կրկնել դեղը: Իսկ դուրս գցած ճիճուն ոչնչացնելու  
համար՝ նոյնը պէտք է անեն, ինչ որ վերև ասացինք  
այսինքն ակտահանել—սատակեցնել ճիճուն եռ եկած  
ջրով:

ՄԱՉՈՐԴ—ՅԱՏԿԻԶ

(Детская острица—пригунчикъ)

Կլոր-երկարաձև ճիճուների տեսակներից ամե-  
նից շատ տարածուածը մազորդ—ցատկիչ կոչուածն  
է: Սա մի խիստ փոքրիկ ու սպիտակ որդ է, որ  
արագապէս շարժոււմ է կղկղանքի վրայ: (նկար 17)



Նկար 17. մազորդ ցատ-  
կիչ ճիճու (բնական չափ):

Սորա արուն երկու անգամ ա-  
ւելի փոքր է էգից, որի երկա-  
րութիւնը վերջոյի հինգերորդ  
մասի շափ է: Այս ճիճուն հաստ  
աղիքների մէջ է լինում, և այն  
էլ մեծ քանակութեամբ: Սա էլ  
բեղմնաւորում և բազմանում է  
ձուիկներից, որ ձուածն, շատ  
նուրբ կեղևով պատած և չա-  
փազանց մանր են, և տեսնելու համար նոյնպէս  
խոշորացոյցով պէտք է 200 անգամ մեծացնենք:  
Մազորդ-ցատկիչ ճիճուով վարակման կերպը միևնոյն  
եղանակով և միևնոյն դէպքերումն է լինում, ինչպէս  
ասկար ճիճուով վարակումը, որի մասին վերև ար-  
դէն խօսեցանք: Աւելացնենք միայն, որ սրանց  
ձուիկները՝ լուծուելով ստամոքսի մէջ թթու հիւթից,  
արտադրում են սնամիջապէս մազորդներ, որ ապա  
աղիքներն են մտնում: Այստեղ մազորդները իրանց  
շարժունութեամբ՝ յետոյքի անցքի շրջանում, սաստիկ  
քոր և երբեմն մինչև անգամ ցան (экзема) ասուած  
կաշուի հիւանդութիւն են պատճառում:

Քորը զրկելով հիւանդին ընից՝ ուժասպառ է

անում նորան, և շատ անգամ ոչ միայն մանուկ-պատանիների, այլ և հոսակաւորների մարմնաշարժութեան պատճառ դառնում: Մագորդ ճիճուով վարակումն իմանալը դժուար չէ: — Բացի վերև ասածից թէ արտաթորուած կղկղանքի վրայ ճիճուները կարող են երևալ-շարժուիլ արագապէս, և այն էլ երբեմն մեծ թուով, միևնոյն ժամանակ հարկաւոր է գիտենալ, որ առանց կղկղանքի էլ են դուրս ընկնում: Իսկ աղիքներից դուրս անելու համար՝ հիւանդին տալիս են սանտոնինի հատիկներ, և ապա 3 բաժակ գազ ջրում սեղանի 3 գդալ գինէքացախ խառնած՝ գրեթէ են դնում առաւօտը և երեկոյեան: Հետևեալ կերպով պատրաստած հեղուկից նոյնպէս կարելի է գրեթէ դնել: — Վերցրէք 3 գլուխ սխտոր և լաւ մանրացնելուց յետոյ՝ ածէք 3 բաժակ եփ տուած ջրի մէջ և թողէք այնպէս 12 ժամ, որ լաւ թրջուի: Յետոյ քամեցէք այդ հեղուկը մի մաքուր կտաւով և ապա գրանով գրեթէ գրէք:

ՈՐԴ-ԿՈՐԲԵՐԱՆ

(Анхилостомъ)

Հող փորոզ բանուորների, քարածուխի հանքերում և աղիւտի գործարանների մէջ բանող մշակ մարդկանց բարակ աղիքներում կարող են գտնուել որդկորբերան կոչուած ճիճուներ, որ մագորդ—ցատկիչ-

ներից փորք ինչ աւելի խոշոր են (նկար 18): Սրանց էգն էլ մեծ է արուից: Բեղմնաւորում և բազմանում են չափազանց մանր ձուիկներից, որ նոյնպէս խոշորացոյցով 200 անգամ մեծացրած կարող ենք տեսնել (նկար 19): Այս ճիճուն



Նկար 18. Կորբերան-որդ (բնական չափ):



Նկար 19. Կորբերան-որդի ձուիկը՝ 200 անգամ մեծացրած:

բազմաթիւ ձուիկներ է ածում, որոնցով վարակում են

մարդիկ կեղտոտ—հողոտ ձեռքերով ուտելու ժամանակ, որպէս և անմաքուր ջուր խմելուց:

Որդ-կորբերան ճիճուների առանձնայատկութիւնն այն է, որ իրանցով վարակուածների աղիքներին կպչելով՝ ձծում են ագահաբար նրանց արիւնը և արեան պակասութիւն պատճառում, որպէս և այս հիւանդութեամբ երբեմն մինչև անգամ մահուան դուռն հասցնում նրանց: Այս ճիճուի ցաւից ազատուելու համար՝ նոյն դեղը պէտք է գործածել ինչ որ ասացինք սօլիտէրից բժշկուելու մասին, — այսինքն արու փիլիկի մուղ (экстрактъ мужского папортника), որ գեղատնից կարելի է ձեռք բերել:

ՉՍՐԱԿ ՃԻՃՈՒ

(Трихина)

Չարակ ճիճուն կամ, ինչպէս սորան անուանում են, պարուրած և ձարակը մի շատ փոքրիկ վեր-

շուկի տասներորդ մասի չափ թելանման որդ է, որ յա-  
ճախ պատահում է խոզի մսի մէջ: Էզը երկու անգամ ա-  
ւելի մեծ է արուից (նկար 20, 21): Խոզերը ախորժով և  
ազահու-



Նկար 20. ձարակի արուն՝ 10 անգամ  
մեծացրած:

թեամբ լա-  
փելով մկնե-  
րին՝ շատ ան-  
գամ վարակում են նրանցից ձարակնե-  
րով: Սրանք որ մտնում և պարուրաձև  
բուն են դնում այդ կենդանիների մարմ-  
նի մկանների մանրաթելերում՝ գտնուում  
են այնտեղ կրային թաղանթով պատած.  
(նկար 22):



Նկար 22. 2 ձարակ ճիճու պարոչի նման կլորում  
խոզի մսի մէջ և կրային թաղանթով պատած:


Նկար 21,  
ձարակի է-  
զը՝ 10 ան-  
գամ մեծա-  
ցրած:

Ուրեմն ձարակով վարակուած խոզի  
միսն ուտելուց՝ մարդս էլ կարող է վա-  
րակուել նոյն ճիճուով: Հետևաբար կարծում ենք թէ  
աւելորդ է կրկնել, որ առհասարակ ամեն մի միս և  
մանաւանդ խոզի միսը շատ լաւ եփած կամ շատ  
լաւ խորոված պէտք է ուտել:

Բայց եթէ պատահեցաւ որ կերածի հետ ձարակը  
ևս մտաւ մարդու ստամոքսը և այստեղ թթու հիւթը  
պատուեց նորան պատող կրային թաղանթը և ինքը  
ձլկուեց—ընկաւ աղիքները՝ ապա պիտի գիտենանք

որ այնտեղ՝ աղիքներում նա շատ շուտով և առատու-  
թեամբ կը բազմանայ:

Չարակ ճիճուն, որ կենդանածին է՝ վեց կամ եօթը  
շաբաթուայ ընթացքում կարող է մօտ 10,000 ձա-  
րակիկներ ցնկնել: Սրանք ծակելով աղիքները՝ թափան-  
ցում են մարդու մարմնի մկանները և այնտեղ նորից  
կրային թաղանթով պատում իրանց: Եւ ահա այս  
կերպ վարակուած անձը մի շատ ծանր և ամբողջ  
մարմնով հիւանդութիւն է ստանում և յաճախ այդ  
հիւանդութիւնից էլ մեռնում: Հետևաբար եթէ  
մէկը կասկածելի կամ խոշորացոյցով չքննուած  
խոզի միսն ուտելուց յետոյ, փսխումն և փոր-  
լուծութիւն ունենայ՝ շատ հաւանական է որ վարա-  
կուած լինի ձարակներով: Ուստի հարկաւոր է այս  
դէպքում անմիջապէս բժշկուել, քանի որ այդ ճիճու-  
ները աղիքներից չեն մտել մկանները: Իսկ բժշկուե-  
լու համար գործ են ածում հետևեալ կերպով պատ-  
րաստած դեղերը:—Նախ՝ վերցրէք սեղանի մի գդալ  
անգլիական աղ (англиская соль) և մի բաժակ ջրի  
մէջ լուծելուց յետոյ՝ ատէք հիւանդին որ խմէ, և  
ապա՝ 15 ժամուայ ընթացքում, ամեն մի ժամից յե-  
տոյ, թող ընդունէ գլիցէրին (глицеринъ)՝ նոյնպէս  
սեղանի մի գդալով:



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several lines and is significantly faded.

Two faint, handwritten lines or markings on the right page, possibly initials or a signature, though they are too light to read clearly.

7445